ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏԻ ՀԱՎԱՏԱՄՔԸ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը մեկ անգամ ևս բոլորիս ստիպեց հետադարձ հայացք ձգել ոչ միայն մեզ՝ հայերիս հետ պատահած ողբերգությանը, այլև վերհիշել Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի սարսափները, Հոլոքոստն ու Ռուանդան:

Սրանք քսաներորդ դարի սահմոկեցուցիչ դրվագներն են: Ավա՜ղ, ոչ բոլորը…

Այս տարի ցեղասպանագետների պատկառելի մի համայնք հավաքվեց Երևանում՝ մի քանի օր շարունակ մտորելու, քննարկելու ու բանավիճելու մարդկության համար չարիք ու խարան դարձած մի հանցագործության շուրջ, որն անվանվում է ցեղասպանություն: Այս երևույթը դեռևս լիովին չի իմաստավորվել ու ընկալվել մարդկության կողմից, և ինչ-որ առումով մենք «համակերպվել» ենք դրա գոյության ու հետևանքների հետ:

Այսօր աշխարհի տարբեր անկյուններում մոլեգնող զանգվածային բռնություններն ու ահաբեկչությունները, տարբեր երկրներում իշխանության գլուխ կանգնած ռազմամոլ ու հավակնոտ առաջնորդների ագրեսիվ հռետորաբանությունն այն ահազանգերն են, որոնք անուշադրության չպետք է մատնել: Հայերը, հրեաները, թութսիներն ու բոսնիացիները չեն կարող միայնակ մնալ իրենց ցավի ու հիշողության հետ: Դա համայն մարդկության՝ տեղի ունեցած ողբերգության հետևանքներին առերեսվելու ցավն է ու օրակարգային խնդիրը:

Ցեղասպանությունը պատմական հասկացություն չէ: Այն չի սահմանափակվում տարածության ու ժամանակի մեջ, քանզի իր ծանրությամբ ու հետևանքներով համամարդկային միջամտության, կանխարգելման ու իմաստավորման է պարտադրում մեզ բոլորիս:

Հոգեբանորեն ծանր է ուսումնասիրել ցեղասպանություն երևույթը: Այդուհանդերձ, նրանք, ովքեր ցեղասպանագիտությունը որպես մասնագիտություն են ընտրել, կայացրել են ճակատագրական որոշում. սա նշանակում է ապրել մեկ ուրիշի, հարյուրների, հազարների ու միլիոնների պատուհասած ցավով ու ողբերգությամբ, մտովի կիսել երբեմն նույնիսկ անհնար թվացող և մարդկային բանականության սահմաններում չտեղավորվող ցավն ու տառապանքը:

Հենց այս ծիրում են միահյուսվում ակադեմիական խստությունն ու գիտականությունը, բարոյականն ու մարդկայինը՝ դառնալով հավատամք ու համոզմունք իսկական գիտնականի համար:

Հայկ Դեմոյան

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն,
«Ցեղասպանագիտական հանդեսի» գլխավոր խմբագիր